ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1958 Общественные науки

Մ. Զուլալյան

16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

16-րդ դարի առաջին կեսին Հայաստանի տերիտորիայում մղվող թուրք-զղլբաշական երկարատև պատերազմների հետևանքով Արևմտյան Հայաստանի ու Քրդստանի տերիտորիան նվաճվեց թուրքերի կողմից։ Հայ ժողովուրդը ընկավ ոչ միայն թուրքական, այլև քրդական ֆեոդալիզմի լծի տակ։ Հանձին թուրքերի, քուրդ բեկերը գտան ուժեղ հենարան, որն ապահովում էր նրանց ֆեոդալական իրավունքները հպատակների նկատմամբ։

Այս հոդվածում մենք կքննենք թուրքական հարկային սիստեմը Հայաստանում։

Թուրքական լծի ծանրությունը նախ և առաջ արտահայտվում էր անցյալում հարկային քաղաքականության մեջ։ Համապատասխան փաստաթղթերի բացակայությունը անցյալում թույլ չի տվել կոնկրետ կերպով ուսումնասիրել այդ հարկային սիստեմը։

Արևմտյան Հայաստանի բնակչությունից գանձվող հարկերի մասին մոտավոր պատկերացում կարելի է ստանալ 1945 թ. ժամանակակից թուրք պատմաբան Օմեր Լութֆի Բարքանի Անկարայում լույս տեսած արխիվային նյութերից՝ այսպես կոչված կանուն-նամեներից[1] (Օրենսգրքերից), որոնց մի մասը վերաբերում է Արևմտյան Հայաստանի նահանգներին։

* * *

Օսմանյան կայսրության բնակչության աշխատավոր մասը, նախ և առաջ գյուղացիությունը, ինչպես ոչ մուսուլման, այնպես էլ մուսուլման, իր ուսերի վրա էր կրում պետական ապարատի կողմից կատարվող շահագործման ամբողջ ծանրությունը, վճարելով բազմաթիվ ու բազմապիսի հարկեր, թե անմիջապես պետությանը, և թե տեղերում նշանակված ֆեոդալներին՝ այսպես կոչված զաիմներին, թիմարյոթներին[2] ու մյուսներին։

---

[1] Omer Lûtfi Barkan „XV ve XVI inci asırında Osmanlı Imperatorlugunun Ziraî ekonominin hukukî ve malî esasları" birinci cilt, Ankara 1945.

[2] *15—17-րդ դարերում Օսմանյան կայսրության մեջ պետական հողը հիմնականում, որպես առանձին ավատներ, այսպես կոչված «զիամեթներ» և «թիմար»-ներ բաժանված էր ֆեոդալներին՝ պայմանական տիրապետության իրավունքով։ Այն հողերը, որոնց տարեկան եկամուտները կազմում էին 20 հազարից մինչև 100 հազար ակչե, կոչվում էին «զիամեթ»-ներ, իսկ տարեկան 300-ից մինչև 20 հազար եկամուտ բերող հողակտորները կոչվում էին «թիմար»-ներ։ Այդ հողակտորներին տիրապետած ֆեոդալները համապատասխան ձևով կոչվում էին զաիմներ և թիմարլներ, այլ կերպ ասած թիմարյոթներ։ Զիամեթները և թիմարյոթները ավելի հայտնի էին սիփահիներ (պարսկերեն հեծյալներ) անուններով։ Նրանք պարտավոր էին կատարել զինվորական ծառայություն պետության*